7068

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«20» 06 2025թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ № 177-25

***Նախաձեռնող՝*** ***«Էմ ջի դիզայն» ՍՊԸ***
*Երևան, Բաղյան 1-ին նրբ., 6/6*

***Գործունեությունը՝*** ***Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում դպրոցի կառուցում***
*Շիրակի մարզ*

***Առդիր՝ 5 թերթ***

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ № 177 - 25**

**«20» հունիսի 2025թ.**

**Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում նախատեսվող դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

| | |
|---|---|
| Նախաձեռնող՝ | «Էմ ջի դիզայն» ՍՊԸ |
| Ներկայացված նյութեր՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/ |
| Գտնվելու վայրը՝ | Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ամասիա բնակավայր |

**Ներածական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում:

Հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

**Նկարագրական մաս**. Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում նախատեսվող 288 տեղանոց դպրոցի կառուցման աշխատանքային նախագիծը մշակված է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 05082024-08-0040 և 10042025-08-0021 վկայականների և N 25 ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

Նախատեսվում է կառուցել 4 մասնաշենք ունեցող դպրոց, նախկին(ապամոնտաժված) դպրոցի տարածքում, որը կունենա կաթսայատուն, արևային կայան, տրանսֆորմատորային ենթակայան, խաղահրապարակ և կանաչապատ տարածքներ:

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 12122 մ², կառուցապատման մակերեսը 8987 մ², որից դպրոց՝ 2912,8 մ²,
օժանդակ շինությունները՝ կաթսայատուն, ենթակայան՝ 71 մ²,
օժանդակ կառուցապատում՝ 2812 մ²,
ճանապարհներ, ավտոկայանատեղիներ՝ 1289 մ²,
մայթեր և հարթակներ՝ 1902,2 մ²,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ ՀՊՏՀ ՍՆՀԿ
ՕՑԵՆԿԻ ՎՈԶԴԵՙՍՏՎԻՅԱ ՆԱ ՕԿՐՈՒԺԱծՈՒծՈ ՍՐԵԔԱ - ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ընդհանուր կանաչապատ տարածքներ՝ 3134 մ²:

Շինարարության ընդհանուր տևողությունը կազմելու է 24 ամիս:

Դպրոցային համալիրի առաջին մասնաշենքը՝ տարրական դպրոցը, նախատեսված է եռահարկ, ուղղանկյունաձև, 27,6x20,0 մ առանցքային չափերով, առանց նկուղային հարկի, որտեղ կլինեն տարրական դասարանները, ներառական դասարանն ու մարզասրահը, խաղասենյակը, շախմատի դասարանը և այլն:

Երկրորդ՝ կենտրոնական մասնաշենքը կներառի առաջին հարկում մուտքային հարթակը թեքուղիներով, նախասրահը, հանդիսությունների դահլիճը, ճաշասրահը, աստիճանը, տնօրենի աշխատասենյակը, վերելակը: Երկրորդ հարկում ուսմասվարների /միջին և տարրական դպրոցների/ աշխատասենյակները, և այլ սենյակներ: Երրորդ հարկում տեղակայված կլինեն գրադարանը, սենյակներ: Կիսանկուղային հարկում տեղադրված կլինի ճաշարանի խոհանոցն՝ իր օժանդակ սենքերով:

Երրորդ մասնաշենքը նախատեսված է միջին և ավագ դպրոցի աշակերտների համար, կլինի եռահարկ, մի հատվածում միայն երկհարկանի, 29.4x 20.0մ չափերով, որտեղ տեղակայված կլինեն դասասենյակներ, սենյակներ, սանհանգույցներ: Նկուղային հարկում կլինեն հրաձգարանը, սանհանգույցները և այլ օժանդակ տարածքներ:

Դպրոցային համալիրի չորրորդ մասնաշենքը՝ 26,0x15,7 մ առանցքային չափերով, մարզական գույքի սենյակով ուղղանկյունաձև մարզադահլիճը, նախատեսված է միահարկ, առանց նկուղային հարկի:

Խմելու որակի ջուրը նախատեսված է, որ կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ –ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Տաք ջրամատակարումը նախատեսված է դպրոցի տարածքում նախատեսվող անհատական կաթսայատնից:

Կենցաղային կեղտաջրերը հեռացվելու են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց, այնուհետև միանալու է տարածքում նախատեսվող ՏՈՊԱՍ 150 կեղտաջրերի մաքրման կայանին:

Ջերմային սնուցումը նախատեսված է կառուցվող կաթսայատնից:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Համալիրում նախատեսված են մեխանիկական դրդմամբ օդի ներածման և արտածման համակարգեր:

Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Գործունեության իրականացման ընթացքում կատարվելու է ընդհանուր 26113 մ³ ծավալով հողային հանույթ, որից 7000 մ³ ծավալով հողային

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

զանգվածը հետլիցք է արվելու, մնացած 19113 մ³ ծավալի հողային զանգվածը, տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից տրամադրված աղբավայր:

Շինարարության ընթացքում առաջանալու է 9 մ³ ծավալով կենցային աղբ, որը պայմանագրային հիմունքներով տեղափոխվելու է աղբավայր: 1800 մ³ ծավալով շինարարական աղբը՝ ներառյալ քանդման աշխատանքներից առաջացած, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումն իրականացվելու է ցնցուղային եղանակով: Նախատեսված են նաև ռետինե խողովակներ՝ ոռոգումն ամբողջությամբ կազմակերպելու համար:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

-աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,

-շինհրապարակը ցանկապատվելու է համապատասխան բարձրության ցանցաթաղանթով,

-սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,

-օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

-բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,

- իրականացվելու է շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ,

-փոշենստեցման նպատակով շինարարական հրապարակն օրվա ընթացքում պարբերաբար ջրվելու է՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս:

-անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան,

-ջրցանի համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,

-շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով.

-շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

-շինարարական տեխնիկայի ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակին: Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմմանն ուղղված մոնիթորինգ:

Մթնոլորտային օդի պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը

ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս:

Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանը:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Շիրակի մարզի, Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն ինչպես նաև Շիրակի մարզպետարանը և Ամասիայի համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

## Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոներն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ամասիայի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
6. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով: Թափոնների տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ամասիայի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
7.Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էմ ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում նախատեսվող դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական
կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան